ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 41-Լ

«25» 04 2025թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 42 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաթևիկ Խաչատրյանի՝ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների և գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով բաց մրցույթներն անցկացնող որակավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվելու մասին ՀՀ գլխավոր դատախազին ուղղված դիմումը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 23-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ծրագրերի ավագ ղեկավար Տաթևիկ Խաչատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների և գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով բաց մրցույթներն անցկացնող որակավորման հանձնաժողովի անդամ՝ 1 տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի ապրիլի 26-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 42 հրամանի 1.1-րդ կետում լրացնել նոր տող՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Տաթևիկ Խաչատրյան - Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ծրագրերի ավագ ղեկավար»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ